ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՏՆՕՐԵՆ՝
Ա. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԴԵԿԱՆԱՏԻ 2017-2018 ԹԹ.ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկանատը Կենտրոնին վերապահված մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթության մակարդակում և ուսուցման առկա և հեռակա ձևերով ուսումնական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովել է՝ համապատասխան ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգի՝ հետևյալ ուղղություններով՝

- **Համապատասխան մասնագիտություններով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման, ուսուցման որակի միջազգային չափանիշների ներդրման ուղղությամբ՝**

Հաշվետու տարում դեկանատի գործունեության արդյունքում իրականացվել են ԳԿՄԿ ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարությունը, ԳԿՄԿ բոլոր ամբիոնների գործունեության կազմակերպման ընթացքում ամփոփագրերի, տեղեկանքների և ուսումնական գործընթացին առնչվող փաստաթղթերի տրամադրումը, իրականացվել են գիտելիքների ստուգման գործընթացը, քննությունների և լուծարքների միասնական փաստաթղթաշրջանառությունը:

/Հիմք՝ ԳԿՄԿ բոլոր մասնագիտությունների գծով ամբիոնների հաշվետվությունները, ԳԿՄԿ հաշվետվությունը/:

Դեկանատի կողմից իրականացվել է ԳԿՄԿ բոլոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրով նախատեսված դասախոսությունների, գործնական պարապմունքների պատշաճ անցկացման, պետական չափորոշիչներին համապատասխան կրթության կազմակերպման վերահսկողությունը /հիմք ԳԿՄԿ բոլոր մասնագիտությունների գծով ամբիոնների հաշվետվությունները, քաղվածքներ՝ 17/9, 17/10, 18/2, 18/3, 18/4/, 18/5 նիստերի արձանագրություններից/:

Իրականացվել են դասալսումներ, քննարկումներ, դիտարկումներ պրոֆեսորադասախոսական համակազմի հետ /հիմք՝ ԳԿՄԿ ամբիոնների հաշվետվությունները, քաղվածքներ՝ ամբիոնների նիստերի արձանագրություններից/:

Իրականացվել են առկա և հեռական ուսուցմամբ դասացուցակների ստեղծման, համակարգման և ուսումնական գործընթացի վերահսկողության աշխատանքներ:
/Հիմք՝ ԳԿՄԿ բոլոր ամբիոնների դասացուցակների առկայություն/:

Վերահսկվել են առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման, նախապաշտպանությունների իրականացման և թեզերի պաշտպանության գործընթացները:

/Հիմք՝ շրջաբերականներ, 2017-2018 թթ. ԳԿՄԿ ամբիոնների նիստերի արձանագրություններ/:

Ստեղծվել են մասնագիտական աշխատանքային խմբեր՝ բենչմարքինգի իրականացման նպատակով /հիմք՝ 2018 թ. փետրվարի 2-ի հրաման, զեկուցագիր, գործողությունների պլան-ժամանակացույց/, իրականացվել են բենչմարքինգ, վերջինիս հիման վրա ԳԿՄԿ-ի ՄԿԾ-ի համադրություն և վերլուծություն, առաջավոր փորձի յուրացում:

Գործընթացի մեջ են աշխատանքները՝ արդյունքների և ԳԿՄԿ առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմների համադրության և վերլուծության ուղղությամբ:

Դեկանատի նախաձեռնությամբ ԳԿՄԿ-ում ստեղծվել է մագիստրոսական թեզերի էլեկտրոնային շտեմարան և պահոց, որը նպատակ է հետապնդում գրագողությունը կանխարգելող ծրագրի միջոցով ստուգել և բացահայտել թեզերում առկա համընկնումներն ու արտագրությունները:

/Հիմք՝ Էլեկտրոնային պահոցի առկայություն/:

Հաշվետու տարում ստեղծվել է ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմերի 2017-2018 թթ. ընթացքում հրատարակած մենագրությունների,

գիտական հոդվածների, ուսումնամեթոդական ձեռնարկների տեղեկութային բազա, որի հիման վրա նախատեսվում է իրականացնել պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորման գործընթաց:

/Հիմք՝ տեղեկութային բազայի առկայություն, շրջաբերականներ/:

- **ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույց, պլան-ժամանակացույցի իրականացման ու բարելավման ուղղությամբ՝**

Համաձայն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փոձագիտական զեկույցում նշված թերությունների՝ ստեղծվել է ՄԿԾ-ի վերջնարդյունքների շահակիցների պահանջներին համապատասխանեցման աշխատանքային խումբ, որը իրականացրել է ՄԿԾ-ի բովանդակության վերանայում, համաձայնեցում վերջնարդյունքների նոր ցանկին:

/Հիմք՝ 2017 թ. դեկտեմբերի 26-ի հրամանի նախագիծ, զեկուցագիր, աշխատանքային խումբ, գործողություններ և պլան-ժամանակացույց/:

Մեկ ամբիոնի օրինակով (հոգեբանության ամբիոն) մշակվել և ներդրվել են կրթական վերջնարդյունքների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմները:

/Հիմք՝ 2017 թ. հոկտեմբերի 10-ի 17/10 նիստի արձանագրություն/:

Մեկ ամբիոնի օրինակով (հոգեբանության ամբիոն) ՄԾԿ-ի բովանդակությունը վերանայվել և համաձայնեցվել է վերջնարդյունքների նոր ցանկին, փոփոխություններ են մտցվել ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում:

/Հիմք՝ քաղվածք ամբիոնի նիստի արձանագրությունից, հոգեբանության մասնագիտությամբ ուսումնական պլան, առարկայական ծրագիր/:

Մշակման փուլում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ առաքելությանն ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման ու բարելավման ընթացակարգերը:

/Հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույց, պլան-ժամանակացույց/:

- **Գործունեություն՝ համապատասխան մասնագիտական բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացման ու ստեղծագործական աշխատանքի աջակցության ուղղությամբ.**

Հաշվետու տարում ԳԿՄԿ-ում հոգեբանության մասնագիտությամբ հաստատվել են ատենախոսությունների թեմաներ և ձևակերպվել են վեց հայցորդ ու ասպիրանտ: Իրականացվել են գիտական թեմաների քննարկումներ, պարզաբանվել են հետազոտական բաղադրիչի իրականացման փուլերը, իրականացման վայրը, մեթոդական ապարատը:

/Հիմք՝ ամբիոնի նիստի 2017թ. 17/10 նիատի արձանագրությունից/:

Դեկանատ են ներկայացվել ու քննարկման դրվել վեց ուսումնամեթոդական ձեռնարկ, երկու մենագրություն, 135 գիտական հոդված, կազմակերպվել է վերջիններիս գրախոսման, դիտարկումների ու առաջարկությունների ներկայացման գործընթացը, տրվել են երաշխավորական եզրակացություններ:

/Հիմք՝ ԳԿՄԿ Գիտական խորհրդի եզրակացությունները/:

Հաշվետու տարում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 20-ամյակին, որի առիթով տպագրվել է գիտական հոդվածների ժողովածու: Ժողովածուում ներառվել են թե՛ արտասահմանյան բուհերից ու գիտակրթական կենտրոններից ներկայացված գիտական հոդվածները, թե՛ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական համակազմի կողմից ներկայացված գիտական հոդվածները և թե՛ Կենտրոնի գրեթե բոլոր մասնագիտություններով մասիստրանտների գիտական հոդվածները: Թվով 80 գիտական հոդված:

/Հիմք՝ Քաղվածք գիտական խորհրդի ապրիլի 6-ի որոշման արձանագրությունից, քաղվածք խմբագրական խորհրդի կազմից և բովանդակություն/:

Հաշվետու տարում տպագրվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի կողմից երաշխավորված «Կաճառ» տարեգիրքը, որը բազմաոլորտ է և ներառված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունելի գիտական ժողովածուների ցուցակում (թվով 50 գիտական հոդված): Ժողովածուում ներառված են թե՛ Կենտրոնի պրոֆեսորադասախոսական համակազմի և թե՛ մագիստրանտների, հայցորդների ու ասպիրանտների գիտական հոդվածները:

/Հիմք՝ Քաղվածք գիտական խորհրդի ապրիլի 6-ի որոշման արձանագրությունից, քաղվածք խմբագրական խորհրդի կազմից և բովանդակություն/:

- **Գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ՝**

Հաշվետու տարում ԳԿՄԿ-ում կազմակեպվել է թեկնածուական մասնագիտական որակավորման քննության իրականացման գործընթաց՝ ստանալով ՀՀ ԲՈՀ-ի թույլտվությունը այն իրականացնել հոգեբանության մասնագիտությամբ:

/Հիմք՝ ՀՀ ԲՈՀ-ի 254/4 հրաման/:

Արդյունքում մասնագիտական որակավորման քննություն են հանձնել հայցորդներ ու ասպիրանտներ ինչպես ԳԿՄԿ-ից, այնպես էլ հանրապետության այլ բուհերից:

- **Կրթական գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ՝**

Դեկանատի կողմից իրականացված բոլոր միջոցառումները (կոնֆերանսներ, գիտական տարեգիրք, մասնագիտական խորհրդակցություններ և միջոցառումներ թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրներում) ապահովված են հանրային հրապարակայնությամբ ու թափանցիկությամբ: Վերջիններիս վերաբերյալ ողջ տեղեկույթը զետեղված է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքում:

/Հիմք՝ ԳԿՄԿ կայք-էջ/:

- **Ուսանողական համակազմի հետ աշխատանքների ուղղությամբ**

Հաշվետու տարում դեկանատը համագործակցել է ուսանողական խորհրդի հետ, նպաստել վերջինիս ինքնակազմակերպման գործընթացին: Արդյունքում հանդիպումներ են իրականացվել ուսանողական խորհրդի ակտիվի հետ, նրանց ներգրավել են գիտական գործունեության մեջ, համատեղ իրականացվել են կազմակերպչական աշխատանքներ՝ կապված թե՛ կամավորական գործունեության և թե՛ գիտական ու հրատարակչական գործունեության հետ: Դեկանատի առաջարկությամբ ու աջակցությամբ ուսանողները այցելել են մի շարք սահմանամերձ գյուղեր, մանկատներ, ակտիվ մասնակցություն ունեցել գիտական կոնֆերանսի և խորհրդակցությունների իրականացման գործընթացում:

2017 թ. փետրվարի 24-ին ուսանողական խորհրդի և ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ ընդլայնված նիստ: Քննարկվեցին ուսանողներին հուզող մի շարք հարցեր, առաջարկվեցին լուծումներ: ՈւԽ-ի նախաձեռնությամբ ուսանողների կողմից բարձրացված խնդիրները ներկայացվեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանին:

/Հիմք՝ քաղվածք արձանագրությունից/:

2017 թ. մարտի 23-ին Պատմության ինստիտուտի մասնաշենքում ՈՒԳԸ նախաձեռնությամբ հանդիպում տեղի ունեցավ Երևանի և մարզերի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական կառույցների ներկայացուցիչների

հետ: Հանդիպման օրակարգում էին բուհերի միջև փոխհամագործակցության ընդլայնման, նոր համատեղ ծրագրեր իրականացնելու խնդիրները:

/Հիմք՝ համագործակցության հուշագիրը/:

2017 թ. հուլիսին մեկշաբաթյա կրթական ծրագիր է իրականացվել «Շող» ցերեկային կենտրոնում, որի ընթացքում տասը մասնագիտությունների գծով ուսանողներ հանդես են եկել դասախոսություններով՝ հասարարարակ կյանքի ամենատարբեր թեմաներով:

/Հիմք՝ Դասընթացի ծրագիրը և շնորհակալագրերը/:

2017 թ. նոյեմբերի 15-ից 25-ը ԳԿՄԿ-ում տնտեսագիտական լաբորատորիայի և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Ժամանակակից բիզնես. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով 72-ժամյա դասընթացը, որին մասնակցեցին դասախոսներ ու ուսանողներ՝ հանրապետության բուհերից և գիտակրթական կենտրոններից:

/Հիմք հավաստագրեր, դասընթացի ծրագիր/:

- **Ուսանողների ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ուղղությամբ՝**

Դեկանատը իրականացրել է իրեն վերապահված գործառույթը. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգին համապատասխան՝ իրականացրել է ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման պայմանները:

/Հիմք՝ քաղվածք մանդատային հանձնաժողովի նիստի արձանագրությունից, ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման ցուցակ/:

ԴԵԿԱՆ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

31.05.2018թ.